ՈՒՋԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԹՈՒՄԲԸ

Գ. Ս. ԹՈՒՄԱՆՅԱՆ

1989 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի նորակառույցների հնագիտության բաժնի Ուջանի (Աշտարակի շրջան) հնագիտական ջոկատը պեղեց գյուղի հարավային ծայրամասում, անասնապահական ֆերմայից դեպի հյուսիս վեր բարձրացող բլրակի վրա «Ցիտրուս» կոոպերատիվին հատկացված հողատարածքին կից գտնվող դամբանաթումբը[1], որն այդ տարածքն ուսումնասիրելիս հայտնաբերել էր հնագետ Լ. Ն. Բիյագովը[2]։ Նշված դամբարանից 50—100 մ հեռավորությամբ, նույն բլրակի վրա, հնագիտական տեղազննությամբ հայտնաբերվեցին ևս երկու ոչ մեծ դամբանաթմբեր, որոնք պեղելու հնարավորություն չստեղծվեց։ Ինձ հայտնի այդ տարածքին ամենամոտ հուշարձանը Մոտկանն է՝ Ուջանից 0,5 կմ դեպի հյուսիս ընկած վաղ երկաթի դարի քաղաքատեղին, որտեղ կան նաև միջնադարյան բնակության հետքեր։ Նրանից մոտավորապես 3 կմ արևմուտք է գտնվում վաղ երկաթի դարի մեկ այլ հուշարձան՝ Սահակաբերդը[3]։

Պեղված դամբանաթումբը չափերով ամենամեծն էր և գտնվում էր բլրակի գագաթին։ Քարահողային լիցքով դամբանաթմբի տրամագիծը 5,40 մ էր, բարձրությունը մոտավորապես 0,40 մ, կրոմլեխը շարված էր իրար շատ մոտ դրված ոչ մեծ որձաքարերով, կանոնավոր շրջանագծով. նրա որոշ քարեր բացակայում էին (նկ. 1, 3)։ Դամբանաթմբի կենտրոնում նմանատիպ քարերով շարված էր մեկ այլ՝ փոքր շրջան, 2,10 մ տրամագծով։ Փոքր կրոմլեխի ներսում դամբանաթմբի նախնական վիճակը խաթարված էր գեոդեզիստների կողմից (քարերը հանված և շուռ էին տրված, հավանաբար մի մասն էլ դեն էր շպրտված)։

Դամբանաթմբի պեղումներով փոքր կրոմլեխից կից գտնվեցին խեցանոթի բեկորներ և վանակատի ցլեպ։ Խեցանոթների բեկորներ և վանակատի միջուկներ, բեկորներ և ցլեպներ գտնվեցին նաև թաղման խցի ծածկասալերի վրայից։ Թաղման խուցը փոքր կրոմլեխի ներսում տեղադրված գետնափոր, ձվածիր սալարկղ էր, ընդամենը 0,35 մ խորությամբ, 1,20 և 0,65 մ երկարությամբ առանցքներով, հարավ-արևելքից՝ հյուսիս-արևմուտք ուղղվածությամբ։ Այն փակված էր նեղ ու երկարուկ չորս փոքրիկ ծածկասալերով։ Թաղման սալարկղի հարավ-արևելյան պատը կպած էր փոքր կրոմլեխին, հարավային պատ էր ծառայում ժայռաբեկորի ելուստը (նկ. 2, 3)։

Սալարկղում անհատական թաղում էր կատարված։ Ննջեցյալը կին էր, մոտավորապես 40—45 տարեկանում մահացած[4], հասակը՝ 162 սմ։ Նա ամփոփված էր դիաթաղման ծիսակարգով, աջ կողքի վրա, ձեռքերը՝ դեմքի առ-

---

1 Գ. Ս. Թումանյան. Ուջանի նորահայտ դամբարանը.—Հայաստանի Հանրապետությունում 1989—1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ. Երևան, 1991, էջ 79—80։

2 Առիթից օգտվելով շնորհակալություն եմ հայտնում գործընկերներիս՝ ճարտարապետ Լ. Վ. Կիրակոսյանին, որը կատարել է դամբարանի չափագրությունը և հնագետ Ա. Ս. Փիլիպոսյանին, որը գրչանկարել է պեղված հնագիտական իրերը։

3 Գ. Արեշյան, Կ. Ղաֆադարյան, Հ. Սիմոնյան, Գ. Տիրացյան, Ա. Քալանթարյան. Հնագիտական հետազոտություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում.—«Երաբեր հասարակական գիտությունների», 1977, № 4, էջ 77—93։

4 Մարդաբանական հետազոտությունը կատարել է ինստիտուտի մարդաբանական լաբորատորիայի գիտաշխատող Մ. Հ. Ալթունյանը։

չև, ձախ ուսը սեղմված դեանին, կծկված դիրքով (նկ. 2, 3)։ Գլուխը գրտնվում էր հյուսիս-արևմտյան պատի մոտ, դեմքով դեպի հարավ։ Գլխի հետևում դրված էր երկաթե կոր դանակ և փոքրիկ կճուճ (պուլիկ)։ Ձեռքերի դաստակներին հագցված էին բրոնզե մեկական ապարանջան, կրծքավանդակի առջև թափված էին բազմաթիվ ուլունքներ, ծնկի մոտ գտնվում էին իլիկների երեք գլուխներ։ Բրոնզե լարից պատրաստված շքասեղ-հերակտը լրացնում էր հնաոլտական իրերի ցուցակը (աղ. I)։ Ննջեցյալի գլխի ետևից գտնվել են նաև հավի երկու ոսկորներ[5]։

Նկ. 1

Հայկական լեռնաշխարհում (և մասնավորապես հյուսիս-արևելյան Հայաստանում) դամբանաթմբային թաղումներն ի հայտ են գալիս առնվազն վաղ բրոնզի դարաշրջանում (Լճաշեն, Ջրառատ, Ստեփանակերտ, Ջրվեժ և այլն) և անընդմեջ շարունակվելով հասնում են մինչև վաղ քրիստոնեական ժամանակաշրջան։ Եվ եթե ճշմարիտ է պատմիչ Կիրակոս Գանձակեցու այն հաղորդումը, որ հովիվները Գրիգոր Լուսավորչին վախճանված գտնելով քարակարկառ են կուտակել նրա վրա[6], ապա անհիմն չի լինի այդ երևույթի մեջ տեսնել դամբանաթմբային թաղման ծիսակարգի մի դրսևորում մ. թ. IV դարում։ Ավելորդ չէ հիշատակել, որ, դամբանաթմբի տակ գտնվող ձվածիր հատակագծով խցերում կատարված թաղումներ հայտնի են դեռևս մ. թ. ա. IV հազարամյակի II կեսից սկսած։ Եվ, այնուամենայնիվ, կառուցվածքային տեսանկյունից Ուշանի նորահայտ դամբանաթմբի զուգահեռները պիտի փնտրել մ. թ. ա. I հազարամյակի հուշարձանների շարքում։

1978 թ. հնագետ Հ. Ա. Օհանյանը պեղել է Աշտարակ—Կումայրի մայրուղուց դեպի ներքին Բազմաբերդ տանող ճանապարհի հատման վայրում, ոչ մեծ բլրի վրա գտնվող մի դամբանաբլուր, որը չափերով 2,5 անգամ գերազանցում է Ուշանի դամբանաթմբին, սակայն կառուցվածքային առումով, ինչպես նաև տարածական իմաստով ամենամոտն է նրան[7]։ Հետաքրքիր է, որ դամբանաբլուրի զգալիորեն մեծ չափերի պայմաններում, ձվածիր հատակագծով դամբանախուցը մոտավորապես նույն չափերն ունի, ինչ որ Ուշանի թաղման սալարկղը։ Ներքին Բազմաբերդի դամբանաբլուրում նույնպես անհատական դիաթաղում է կատարված, սակայն ուղեկցող նյութը էականորեն տարբերվում է մեր պեղած դամբարանի թաղման գույքից։ Պեղող հնա-

---

5 Կենդանաբանական նյութի հետազոտման համար շնորհակալություն եմ հայտնում ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Ս. Կ. Մեժլումյանին։

6 Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961, էջ 13։

7 Հ. Օհանյան. Ներքին Բազմաբերդի դամբանաբլուրը.—«Երբեր հասարակական գիտություններից», 1980, № 6, էջ 86—90։

գետը ներքին Բազմաբերդի № 4 դամբարանը թվագրում է մ. թ. ա. IV—I դդ.։

Հնագետ Ռ. Մ. Թորոսյանը 1971 թ. էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում պեղել է քարե լիցքով դամբանաթմբեր[8], որոնց իցերը կա, ինչպես քննարկվող օրինակում է, ստորգետնյա են և տեղավորված են թմբի կենտրոնական մասում։ Այսքանով ավարտվում է Ուշանի և Այգեշատի դամբարանների կառուցվածքային նմանությունը։ Այգեշատի դամբարանները թվագրվում են մ. թ. ա. I—մ. թ. I դարերով։



Նկ. 2

Հ. Ա. Մարտիրոսյանի կարծիքով մ. թ. ա. VI—IV դդ. հայերն իրենց հանգուցյալներին թաղում էին նույն տիպի դամբարաններում, ինչ որ նախկինում, և որ այս դարաշրջանի դամբարանների ձվածիր հատակագիծը և կառուցվածքային առանձնահատկությունները սովորական են Հայաստանում մ. թ. ա. II հազարամյակի վերջում և մ. թ. ա. I հազարամյակի սկզբում[9]։ Այս կարծիքին համամիտ է Գ. Ա. Տիրացյանը[10], նշելով, որ առկա թաղման ձևերի տարատեսակությունը չպետք է բացատրել միայն էթնիկական տարբերություններով։ Կարևորն այն է, որ նրանց մեծամասնությունը ծագում է

---

8 Ռ. Թորոսյան, Ֆ. Տեր-Մարտիրոսյան. Ուշ հելլենիստական ժամանակաշրջանի դամբարաններ էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 2, էջ 265—269։

9 А. А. Мартиросян. Город Тейшебаини. По раскопкам 1947—1958 гг. Ереван, 1961, с. 146.

10 Г. А. Тирацян. Культура древней Армении. VI в. до н. э.—III в. н. э. (по археологическим данным). Ереван, 1988, с. 33.

առավել վաղ դարաշրջաններում[11]։ Պայտաձև-ձվածիր հատակագծով, ոչ մեծ քարերով կամ սալերով շարված դամբանախցեր հայտնի են տարբեր հուշարձաններից՝ Արգիշտիխինիլիից, Կարմիր Բլուրից, Գառնիից, Օշականից, Կարճաղբյուրից և Հայաստանի այլ պեղավայրերից։

Ասվածից կարելի է եզրակացնել, որ Ուշանի դամբարանը, ինչպես կառուցվածքով, այնպես էլ թաղման ծիսակարգով (կծկված դիաթաղում), ներկայացնում է այն կայուն ձևերից մեկը, որը տարածված էր Հայաստանում երկաթի դարաշրջանից սկսած մինչև մեր թվարկության առաջին դարերը։ Այս պայմաններում դամբարանի թվագրման համար առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում թաղման գույքը։

Ուշանի դամբարանի թաղմանն ուղեկցող իրերի համալիրը մեծ չէ, սակայն բաղմատեսակ է առարկաների գործառական նշանակությամբ և, առավել ևս, ըստ նյութի։

Պեղումներով գտնված միակ ամբողջական խեցանոթը պուլիկն է (աղ. I, 13). սև, թույլ փայլեցված մակերևույթով, հարթ նստուկով, ներճկված կարճ վզով, փոքր-ինչ դուրս թեքված շուրթով։ Վզի հիմքում անփութորեն հորիզոնական ակոս է արված։ Նման խեցանոթներ հայտնի են մ. թ. ա. I հազարամյակի բաղմաթիվ պեղավայրերից. ունենալով կիրառության խիստ ընդարձակ ժամանակաշրջան, նրանք չեն կարող նպաստել որևէ հուշարձանի թվագրմանը։

Աշխատանքային գործիքները կարելի է բաժանել երկու խմբի։ Առաջին խմբի մեջ մտնում է մեկ իր՝ երկաթե կոր (մանգաղատիպ), որոշ չափով քայքայված դանակը (աղ. I, 12), որը կոթին փոքրիկ անցք ունի դաստապանն ամրացնելու համար։ Դա պատկանում է դանակների այն տեսակին, որը Ս. Եսայանը, Շամշադինի շրջանի Բերդ ավանի դամբարանադաշտից գտնված նյութերը դասակարգելիս, առանձնացրել է որպես դաշույնների և դանակների խմբի երկրորդ տիպ[12], և Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով մ. թ. ա. VII դարի վերջից դառնում է Անդրկովկասի դամբարանադաշտերից պեղված թաղման գույքի բնորոշ առարկաներից մեկը[13]։ Մանգաղատիպ երկաթե դանակներ հայտնի են Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի բազմաթիվ հուշարձաններից. դրանք ընդհանուր առմամբ կարելի է թվագրել մ. թ. ա. VI—III դդ.[14]։ Մ. թ. տ. V դարով է թվագրվում Կիմմերիկից գտնված նման մի իր[15]։

Յու. Մ. Գագոշիձեն գտնում է, որ երկաթե դանակը զենք համարել չի կարելի[16]։ Հօգուտ այս տեսակետի է խոսում Ուշանի դամբարանում դանակի գտնվելու փաստը։ Իսկ որ հիշյալ դամբարանում անկասկած կին է թաղված, ապացուցում են ոչ միայն մարդաբանական հետազոտությունները, այլև դամբանախցում իլիկի երեք գլուխների առկայությունը։ Կ. Ք. Քուշնարյովան, ի հաստատումն այն տեսակետի, որ իլիկներն ուղեկցում են միայն կանանց թաղումներին, նշում է Արթիկի դամբարանադաշտի մի շարք համալիրներ, որոնք, ի թիվս իլիկների, պարունակում են նաև կանանց արդուզարդի առար-

---

11 Նույն տեղում, էջ 109։

12 С. Есаян. Могильник раннеармянского времени в поселке Берд Шамшадинского района.—Историко-филологический журнал, 1969. № 4, с. 288.

13 Б. Б. Пиотровский. Кармир-Блур I. Ереван, 1950, с. 37, 38, рис. 17.

14 Археология СССР. Древнейшие государства Кавказа и Средней Азии. М., 1985, с. 126, табл. XII, 11; с. 146, табл. XXXII, 18; с. 116, табл. II, 4; с. 129, табл. XV, 16; с. 165, табл. LI, 8.

15 Археология СССР. Античные государства Северного Причерноморья. М., 1984, с. 242, табл. LV, 20.

16 Յու. Մ. Գագոշիձե. Քսանի կիրճի վաղ անտիկ դարաշրջանի հուշարձանները. Թբիլիսի, 1964, էջ 101 (վրացերեն)։

կաներ՝ ապարանշաններ, կախիկներ, ականջողեր, տարատեսակ ուլունքներ[17]։

Ե՛վ հնդեվրոպական[18], և՛ ոչ հնդեվրոպական[19] հնամենի ավանդույթներում իլիկը դիտվել է որպես ստորերկրյա աշխարհի կանացի աստվածության կամ պարզապես կնոջ անկապտելի հատկանիշ։ Խեթական ծիսական երկխոսություններից մեկում ստորին աշխարհի աստվածուհիներ Իստուստայան և



Նկ. 3

Պապաիյան նկարագրված են իլիկները ձեռքներին[20]։ Ըստ խեթական տեքստերի՝ բուրդ էր նվիրաբերվում Կամրուսեպա աստվածուհուն, որը, հավանաբար, նույնպես կապված էր ստորին աշխարհի հետ և, հետևաբար, նրա ատրիբուտն իլիկն էր[21]։ Հոմերոսյան պոեմներում իլիկ են մանում թե՛ տիրուհիները (Անդրոմաքե, Պենելոպե, Հեղինե, Արետե), թե՛ ստրկուհիներն ու

17 К. Х. Кушнарева. Древнейшие памятники Двина. Ереван, 1977, с. 95.

18 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. Т. II, Тбилиси, 1984, с. 582.

19 В. А. Алекшин. Социальная структура и погребальный обряд древнеземледельческих обществ (по археологическим материалам Средней Азии и Ближнего Востока). Л., 1986, с. 21.

20 В. Г. Ардзинба. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, с. 88; Луна, упавшая с неба.—Древняя литература Малой Азии. Пер. с древнемалоазиатских языков. вступит. статья и коммент. Вяч. Вс. Иванова. М., 1977, с. 48.

21 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Указ. соч., с. 581—582.

նաժիշտները[22]։ Կարելա-ֆիննական էպոսում նույնպես կանայք անբաժան են իլիկից, սկսած գյուղացի աղջիկներից մինչև Պոհյոլայի չքնաղ աղջիկը և լուսնի ու արևի դուստրերը[23]։ Հայ ժողովրդական դյուցազներգությունից ես մեզ են հասել իլիկ մանող կանանց կենդանի պատկերներ.

Գյուղի կնկտիք յելած, տղուն ա,
Ցառեկան ա կը մանեն՝ կայնած դռներ[24]։

Իլիկ էր մանում նաև խանդութ խաթունը.

— Լավ, ես չեմ էլնի տուրս, իմ տուռ կը շինեմ.
Նստեմ էստեղ, իմ քարգահ քաշեմ[25]։

Այդ ավանդույթը գոյատևել է գրեթե մինչև մեր օրերը։ Պատահական չէ Թումանյանի դիպուկ համեմատությունը.

Դե մեռի՛ր, էլի՛, գետի՛նը մըտիր,
Տանը վե՛ր ընկիր՝ ի՛լիկ պըտըտիր...[26]։

Մնում է ավելացնել, որ Բերդից գտնված հնագիտական իրերի համալիրում երկաթե կեռ դանակների հետ միասին, ի թիվս այլ իրերի, առկա է նաև իլիկի ոսկրե գլուխ[27]։

Աշխատանքային գործիքների երկրորդ խումբն են կազմում վերոհիշյալ իլիկների երեք գլուխները։ Մեկը վատ թրծված կավից է պատրաստված, կիսագնդաձև է, կիսով չափ փշրված (աղ. I, 3)։ Մյուս երկուսը պատրաստված են տարբեր ապարներից։ Նրանցից մեկի մեջ պահպանվել էր երկաթալարե կեռիկից մի կտոր։ Այս իլիկի գլուխը (աղ. I, 2) պատրաստված է բաց կարմրավուն երանգով սրճակաթնագույն մանրահատիկ կրաքարից[28]։ Երրորդ համանման իրը մուգ կարմիր գույն ունի և պատրաստված է մնացուկային կազմությամբ օֆիկարբոնատից (աղ. I, 1)[29]։ Երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր Մ. Ա. Սաթյանի հաղորդման համաձայն ինչպես այս ապարների բեկորները, այնպես էլ այն քարերը, որոնցից պատրաստվել են ուլունքները (դրանց մասին կխոսվի ստորև), կարելի է հավաքել Արաքս գետի հովտում կամ Արաքս և Ախուրյան գետերի միախառնման վայրից դեպի արևմուտք ընկած միոցեն-պլիոցենյան բեկորային նստվածքաշերտերում։ Այս փաստը կողմնակիորեն վկայում է, որ ինչպես պեղումներով հայտնաբերված ուլունքները, այնպես էլ իլիկները հավանաբար տեղական արտադրանքի նմուշներ են։ Ինչպես մ. թ. ա. VI—IV դդ., այնպես էլ հելլենիստական դարաշրջանի թաղումներում հանդիպում են

---

22 Հոմերոս. Իլիական. Երևան, 1955, երգ վեցերորդ։ Հոմերոս. Ոդիսական. Երևան, 1988, երգ առաջին, չորրորդ, վեցերորդ, յոթերորդ։

23 Կալևալա. Երևան, 1972, Ռունա Ա, Ը, Թ և այլն։

24 Սասնա Ծռեր. Երևան, 1977, էջ 288։

25 Նույն տեղում, էջ 341։

26 Հ. Թումանյան. Անուշ, երրորդ երգ, XIV։

27 С. Есаян. Указ. соч., с. 291.

28 Տարբեր քարերից պատրաստված բոլոր հնագիտական առարկաների մանրադիտակային հետազոտությունը, լուսապատկերային վերլուծությունը կատարվել և դրանց մասին տվյալներն ինձ են տրամադրվել ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի լաբորատորիայի վարիչ Մ. Ա. Սաթյանի կողմից։ Այդ գործին մասնակցել են նաև նույն ինստիտուտի աշխատակիցներ Ռ. Ն. Տայանը (Զանգեզուրի խմբի պետ) և Օ. Գ. Գոլգենբերգը։

29 Այս առարկայի իլիկի գլուխ լինելու մասին միտքը ինձ հուշեց հնագետ Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսովը։

կրաքարից, հասպիսից և այլ քարերից պատրաստված ուլունքների գլուխներ[30]։

Թաղման գույքում մեծ թիվ են կազմում պերճանքի առարկաները։ Դրանցից երկուսը բրոնզե լարից պատրաստված, ներճկված ապարանջաններ են, որոնցից մեկի վերջավորության վրա արված են հորիզոնական ակոսներ



Աղ. 1

(աղ. I, 11), իսկ մյուսը՝ օձագլուխ վերջավորություններով է (աղ. I, 10)։ Թվագրող նյութ հանդիսանալով աքեմենյան դարաշրջանի համար, ներճկված իրանով ապարանջանները շարունակում են կիրառության մեջ մնալ Անդրկովկասում ընդհուպ մինչև մեր թվարկության սկիզբը[31] (ըստ նորահայտ

---

30 Ж. Д. Хачатрян. Материальная культура древней Армении в V в. до н. э.—IV в. н. э. (По новонайденным материалам из погребений). Автореферат канд. дисс., Ереван, 1966, с. 8.

31 Г. А. Тирацян. Указ. соч., с. 47, табл. V, 2; Ժ. Դ. Խաչատրյան. Արտաշատ II. Անտիկ դամբարանադաշտեր (1971—1977 թթ. պեղումները). Երևան, 1981, էջ 74։

տվյալների՝ Վրաստանում ներճկված ապարանջաններ են գտնվել հռոմեական դարաշրջանի հնագիտական համալիրներում)[32]։ Նման ապարանջաններ հայտնի են Կարմիր Բլուրից (դամբարանադաշտ)[33], Ջրառատից[34], Գառնիից[35], Օշականի անտիկ դամբարանադաշտից[36] և բազմաթիվ այլ հնավայրերից։ Աքեմենյան մշակութային աշխարհում հայտնի են ներճկված իրանով ոսկե ապարանջաններ[37]։ Օձագլուխ վերջավորություններով ապարանջանները, որոնք լայն տարածում ունեին Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VIII—VI դդ., որոշ ձևափոխությամբ շարունակում են գոյատևել հետագա դարերում։ Ներճկված իրանով օձագլուխ բրոնզե ապարանջաններ գտնվել են Անիում, Դվինում, Բջնիում[38], Իջևանում, Բերդում, Թռեղքում (Սանտա՝ Ներոն Դերեսի)[39] և այլ վայրերում։ Ներճկված իրանով տարբերություն (հարթ, ատամնավոր), զանազան վերջավորություններով (երկրաչափական մարմիններ, կենդանիների գլուխներ՝ օձ, խոյ, վայազ, առյուծ, տուր, հորթ) և տարբեր մետաղներից (ոսկի, արծաթ, բրոնզ, երկաթ) պատրաստված ապարանջանները տարածված են ինչպես Հայաստանի (արդեն նշվածներին ավելացնենք՝ Ներքին Բազմաբերդ, Աղբաշ, Աթարբեկյան, մ. թ. ա. V—I դդ.), այնպես էլ Կողքիսի մ. թ. ա. IV—III դդ. թաղումներում[40], հատկանշական են Աղվանքի մ. թ. ա. II—I դդ. հուշարձանների համար, լայնորեն հայտնի են էլլաթանյան մշակույթում (Ֆերգանա, մ. թ. ա. V—IV դդ.)[41]։

Ուշանի դամբարանից պեղումներով գտնվեց բրոնզե լարից պատրաստված մեկ իր ևս՝ աշտարակաձև, քառագաթ գլխիկով շքասեղ-հերակալ, գլխիկից դուրս արված հորիզոնական ակոսներով, սուր ծայրով (աղ. I, 9)։ Նման շքասեղ-հերակալները հազվագյուտ չեն Հայաստանում։ Կարմիր Բլուրի հելլենիստական դարաշրջանի թաղումներից մեկում գտնվել է 9,6 սմ երկարությամբ բրոնզե լարից պատրաստված, վերին մասը հորիզոնական ակոսներով զարդանախշված շքասեղ, որը չափազանց նման է մեր պեղումներով գտնված հերակալին։ Կարմիր Բլուրի շքասեղի ճյուղավորված գլխիկում կա-

---

32 Ю. М. Гагошидзе. Могильники Триалети. Каталог III. Могильники античной эпохи. Тбилиси, 1982, с. 75.

33 Б. Б. Пиотровский. Указ. соч., с. 19; А. А. Вайман, Г. А. Тирацян. Кармир-Блурский некрополь эллинистического времени.—Вестник общественных наук, 1974, № 8, с. 65, табл. II, 7.

34 А. О. Мнацаканян, Г. А. Тирацян. Новые данные о материальной культуре древней Армении.—Известия АН АрмССР (обществ. науки), 1961, № 8, с. 72, табл. 2.

35 Б. Н. Аракелян. Гарни II. Результаты работ Гарнийской археологической экспедиции 1951—1955 гг. Античный период. Ереван, 1957, с. 77, рис. 44, Ж. Д. Хачатрян. Гарни V. Античный некрополь. Результаты раскопок 1956—1972 гг. Ереван, 1976, с. 30, рис. 10, 3, 4.

36 С. А. Есаян, А. А. Калантарян. Ошакан I. Основные результаты раскопок 1971—1983 гг. Ереван, 1988, с. 52, табл. XLI, 2, 3, XLII, 9, 10.

37 А. О. Мнацаканян, Г. А. Тирацян. Указ. соч., с. 73.

38 Ս. Ա. Եսայան. Հայաստանի պատմական թանգարանի բրոնզե ապարանջանները.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 2, էջ 90։

39 Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети. I. Опыт периодизации памятников. Тбилиси, 1941, с. 30; Ю. М. Гагошидзе. Указ. соч., с. 84—86, 93, табл. I, 3—6, II, 5—7, IV, 1.

40 Вани I. Археологические раскопки 1947—1969. Тбилиси, 1972, с. 57, 65; Вани IV. Археологические раскопки. Тбилиси, 1979, с. 118—120, 147—148, рис. 105, 192, 451.

41 Археология СССР. Древнейшие государства Кавказа и Средней Азии, с. 171, табл. LVII, 2; с. 118, табл. IV, 20, 22; с. 359, табл. LXXI, 53, 54.

բող էր սկզբնապես զարդաքար տեղադրված լինել[42]։ Վերին մասը մշակված բրոնզե շքասեղ է գտնվել նաև Հացավան ամրոցում[43] (պատահական գտածո)։ Իսկ Նոր Արեշի դամբարանադաշտի առաջին թաղումից և Մեծամորի № 4 դամբարանից (մ. թ. ա. VIII դար) հայտնաբերված «թռչնագլուխ կեռիկներով», գլխիկից ցած լայնակի ակոսներով զարդարված շքասեղները[44] կարող են մեր օրինակի «նախատիպերը» հանդիսանալ։

Բերդ ավանի վերոհիշյալ հնագիտական համալիրում առկա են մի քանի հերակալ-շքասեղներ, որոնցից մեկը բավականին մոտ է Ուլանի դամբարանից գտնվածին, միայն Բերդի շքասեղի գլխիկը կլոր է[45]։ Հարթ գլխիկով շքասեղ է գտնվել Օշականի № 65 դամբարանում (մ. թ. ա. IX—VIII դդ.), որը չափերով համընկնում է մեր օրինակին։ Այն նույնպես պատրաստված է մի ծայրը սուր բրոնզե լարից, որի վերին հատվածը զարդարված է հորիզոնական ակոսներով[46]։ Հետաքրքիր է, որ խաթարված այդ դամբարանում, որտեղ ենթադրվում է խմբակային թաղում, ձձումի առկայությունը հուշում է, որ հանգուցյալների թվում կին է եղել։

Մետաղե և ոսկրե «վարսակալ հերուններ» գտնվել են Արտաշատից։ Արևելյան դամբարանադաշտում հայտնաբերվել է գլխի մասում փորագիր գոտիներ ունեցող, բրոնզե կլոր լարից պատրաստված հերուն[47]։ Ութերորդ բլրից գտնված ոսկրե հերունի գլխիկն ունի կճղակի ձև[48]։ Գառնիի բրոնզե լարից պատրաստված վարսակալներն ունեն ոլորուն գլխիկներ, իսկ քննարկվող շքասեղ-հերակալին թույլ նմանություն ունեն ոսկրե վարսակալները, որոնք վերին մասում զարդարված են լայնակի ակոսներով, սակայն որոնց գլխիկները, ի տարբերություն մեր օրինակի, կլոր են[49]։

Պերճանքի առարկաների շարքում մեծ խումբ են կազմում ուլունքները։ Դրանցից 13-ը պատրաստված են օձաքարից, 17-ը՝ հախճապակուց, 4-ը՝ ապակու մածուկից և 95-ը՝ ապակուց։ Մուգ դարչնադույն-սևաթույր օձաքարից պատրաստված ուլունքներից 5-ը ճանճաձև են (աղ. I, 8), 1-ը՝ տակառաձև, 7-ը՝ երկկոնիկ (աղ. I, 7)։ Տակառաձև և երկկոնիկ ուլունքները զարդանախշված են երկայնակի փորագիր ակոսներով։ Ուլունքների երկայնակի ալանցքներով, կենտրոնական մասում երկկողմանի շաղափման միջոցով անցքեր են արված թելից կախելու համար։ Այս տեսակի ուլունքներ գտնվել են Կարմիր Բլուրից։ Նրանք սև գույնի են, ծածկված ակոսներով և թվագրվում են մ. թ. ա. VII դարով։ Կարմիր Բլուրից գտնվել են նաև «մատնեքավոր» ուլունքներ պատրաստված լեռնային բյուրեղից, ինչպես նաև հախճապակուց նույն ձևավորումով պատրաստված տակառաձև ուլունքներ[50], Բերդի վերոհիշյալ դամբարանախմբից ևս գտնվել է երկայնակի կտրվածք-

---

42 Г. А. Тирацян. Указ. соч., с. 144, рис. 39; Л. Л. Вайман, Г. А. Тирацян. Указ. соч., с. 65, табл. II, 5.

43 Գ. Տիրացյան. Հացավան ամրոցի 1961 թ. պեղումները.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1962, № 11, էջ 80։

44 Հ. Մարտիրոսյան, Հ. Մնացականյան. Նոր Արեշի ուրարտական կոլումբարին.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 10, էջ 66, 68, աղ. 2։ Է. Վ. Խանդադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան. Մեծամոր. Երևան, 1973, էջ 180, աղ. XLIII, 6։

45 С. Есаян. Указ. соч., табл. III, 12.

46 С. А. Есаян, А. А. Калаитарян. Указ. соч., с. 87, табл. LXXVI, 5.

47 Ժ. Դ. Խաչատրյան. Արտաշատ II, էջ 106, նկ. 35, 9։

48 Նույն տեղում, էջ 103, նկ. 34, 9, 10։

49 Б. Н. Аракелян. Указ. соч., с. 14—18, 75, с. 76, рис. 43, с. 80, рис. 54; Ж. Д. Хачатрян. Указ. соч., с. 30, рис. 10, 10—13.

50 Б. Б. Пиотровский. Кармир-Блур III. Ереван, 1955, с. 51.

ներով զարդարված ապակե մի մեծ ուլունք։ Սաթից պատրաստված ակոսավոր ուլունքներ են հայտնաբերվել Մեծամորի № 4 դամբարանում[51]։

Մ. թ. ա. IV դարով են թվագրվում Հյուսիսային Մերձսևծովյան երկրներից հայտնի փոքրաթիվ տակառաձև ուլունքները, որոնք պատրաստված են գիշերաքարից և զարդանախշված են երկայնակի փորագիր ակոսներով[52]։ Նշված տարածքից հայտնի են նաև նման զարդանախշ ունեցող եգիպտական հախճապակուց պատրաստված ուլունքներ, որոնք թվագրվում են մ. թ. ա. VI—V դդ.[53]։

Ակոսավոր տակառաձև ոսկյա ուլունքներ են հայտնի Կողբիսի Վանի հուշարձանից[54]։ Համանման ոսկյա ուլունքներ, կախազարդերի հետ միասին, հայտնաբերվել են Սամագլոյում[55]։ Վանիի և Սամագլոյի հնագիտական հավաքածուներում քիչ չեն ոսկե և բրոնզե ապարանջաններն ու մանյակները, որոնց վերջավորություններն ավարտվում են ակոսավոր տակառաձև զարդերով[56]։ Նշված ապարանջանների թվում կան նաև ներճկվածները։

Լայն տարածում ունեն շաղախից (մածուկ) պատրաստված մատնեքավոր երկկոնիկ և տակառաձև ուլունքները (Օշական, Գառնի, Բջնի, Կարճաղբյուր, Արմավիր, Մեծամոր և այլն)։ Վերջիններիս նախատիպերը հանում են միջին և ուշ բրոնզի դարաշրջաններ (Մայիսյան, Արթիկ, Կարմիր Վանք, Խաչբուլաղ[57])։ Սրանց համաժամանակյա այլ հնավայրերից ևս (Պարսկական Թալիշ)[58] հայտնի են շաղախից պատրաստված ակոսավոր տակառաձև ու երկկոնիկ ուլունքներ։

Ապակուց պատրաստված ուլունքները սեղմված գնդաձև են կամ տորաձև, նրանց գույնը կապույտ է, արծաթափայլ կամ ոսկեփայլ երանգներով (աղ. I, 4)։ Մեծ քանակությամբ ապակե ուլունքների առկայությունը (ապա նաև դերակշռությունը) աքեմենյան, հետագայում և հելլենիստական դարաշրջաններում Հայաստանի և Վրաստանի թաղման նյութերի բնութագրիչ առանձնահատկություններից է[59]։ Ապակե ուլունքներն անկասկած պատրաստվել և գործածվել են Հայաստանում ավելի վաղ, առնվազն մ. թ. ա. II հազարամյակի կեսերին[60]։ Հարկ է հիշեցնել նաև, որ դրանից ավելի քան մեկ հազարամյակ անց Հռիփսիմյան կույսերն իրենց ապրուստը հոգում էին ապակե ուլունքներ պատրաստելով[61]։ Մեր հուշարձաններում շատ են հիշ-

---

51 Է. Վ. Խանդաղյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան. Նշվ. աշխ., էջ 179, գուն. տախտ. VII, 2։

52 Е. М. Алексеева. Античные бусы Северного Причерноморья. М., 1978, с. 8.

53 Археология СССР. Античные государства Северного Причерноморья, с. 348, табл. CLVII.

54 Вани I, с. 241, рис. 193—197.

55 Ю. М. Гагошидзе. Самадло. Каталог археологического материала. Тбилиси, 1981, с. 45, табл. LX, 10—13.

56 Вани I, с. 65, рис. 170; Ю. М. Гагошидзе. Самадло..., с. 46, табл. LXI, 28.

57 Г. Ф. Джафаров. Связи Азербайджана со странами Передней Азии в эпоху поздней бронзы и раннего железа. Баку, 1984, с. 50, табл. VII, 15, 25; VIII, 29; IX, 45.

58 Cl. F. A. Schaeffer. Stratigraphie comparée et chronologie de l'Asie Occidentale. IIIe et IIe millénnaires. London, 1948, plan. LX, LXI.

59 Г. А. Тирацян. Указ. соч., с. 144.

60 Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Դ. Խաչատրյան. Հին Հայաստանի ապակին (I—IV դդ.). Երևան, 1969, էջ 8։

61 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայանց. Տփղիս, 1909, ԺԳ։

յալ ուլունքների հավաքածուները. նշենք միայն, որ Գոլովինոյի դամբարաններից մեկում գտնված ապակե գնդաձև (կոտրված) ուլունքը (ՀՊՊԹ № 291/95) Ուշանի նմանատիպ ուլունքի երկվորյակն ասես լինի։

Հախճապակուց պատրաստված ուլունքները կաթնագեղնավուն են, հիմնականում՝ գնդաձև, մեկը երկկոնիկ է (աղ. I, 5)։ Ապակու մածուկից պատրաստված ուլունքները (աղ. I, 6) խոզովակաձև են, կանաչ գույնի։ Երկու երկարուկ ուլունքների վրա պահպանվել են կարմիր ներկի հետքեր։ Բացառությամբ օձաքարից պատրաստված ճանճաձև ուլունքների, որոնց զուգահեռներն ինձ հայտնի չեն, մնացած ուլունքներն ունեն իրենց զուգահեռները Անդրկովկասի բազմաթիվ հուշարձաններում մ. թ. ա. VII—VI դդ. սկսած մինչև ուշ հելլենիստական ժամանակաշրջան։

Ասվածից կարելի է եզրակացնել, որ Ուշանի դամբարանի արտեֆակտների յուրաքանչյուր խումբն, առանձին վերցրած, ունի գործառության բավականին տևական ժամանակաշրջան և դամբարանի ճշգրիտ թվագրումը որոշակի դժվարություն է ներկայացնում։ Վիճակը բարդ է նաև նրանով, որ հնագետները տարակարծիք են հնագիտական հուշարձաններից մի քանիսի թվագրման հարցում, որոնց հավաքածուներում մենք փնտրում ենք Ուշանի դամբարանի նյութերի զուգահեռները։ Ըստ որում Բ. Կուֆտինը, Ն. Խոշտարիան, Հ. Մարտիրոսյանը հակված էին ներքոհիշյալ հուշարձանների առավել վաղ թվագրման, իսկ ժամանակակից հետազոտողներից ոմանք (Յու. Գագոշիձե, Օ. Լորդկիպանիձե, Ժ. Խաչատրյան) ավելի ուշ թվագրման կողմնակիցներ են (դրանում ակնհայտորեն իր ծանրակշիռ դերն է խաղում վերջին տասնամյակներում հնագիտական նոր նյութերի հայտնաբերումը և գիտական շրջանառության մեջ մտնելը)։ Յու. Մ. Գագոշիձեն, օրինակ, վերանայելով Բ. Կուֆտինի հայտնի տեսակետը, փորձում է հիմնավորել Ներոն Դերեսի դամբարանադաշտի թվագրությունը մ. թ. ա. I դարի սահմաններում[62]։ Օ. Դ. Լորդկիպանիձեն որոշ չափով «երիտասարդացնում» է Ն. Խոշտարիայի կողմից թվագրված Վանիի հուշարձանախմբի հնագիտական համալիրների տարիքը։ Հ. Ա. Մարտիրոսյանն, իր հերթին, գտնում էր, որ Ալեքսանդր Մակեդոնացու կամ Լիսիմաքոսի օրոք հատված դրամի հայտնաբերումը Կարմիր Բլուրի դամբարանադաշտում, չի կարող հիմք հանդիսանալ ողջ դամբարանադաշտի ավելի ուշ թվագրման համար, այլ միայն ցույց է տալիս, որ ուշ աքեմենյան ժամանակաշրջանի դամբարանադաշտը տևական գործածություն է ունեցել նաև հետագայում[63]։

Ինչևիցե, փորձելով թվագրել Ուշանի դամբարանը, պիտի հիշենք, որ չնայած թաղմանն ուղեկցող որոշ նյութերի ժամանակագրական ստորին սահմանը հասնում է մ. թ. ա. II հազարամյակ, իսկ նրանց մի մասի ուշ շրջանի արձագանքները՝ մեր թվարկության առաջին դարերը, այնուամենայնիվ, հնագիտական առարկաների շարքում կան այնպիսիները, որոնք հնարավորություն են տալիս զգալիորեն նեղացնել թվագրության սահմանները։ Դրանք բրոնզե ներճկված ապարանջաններն են, որոնք, ինչպես վերն ասվեց, աքեմենյան մշակութային աշխարհի ծնունդ լինելով, շարունակում են գոյատևել հետագա դարերում։ Արդեն նշվել է, որ Հայաստանում ներճկված

62 Ю. М. Гагошидзе. Могильники Триалети, с. 84.
63 А. А. Мартиросян. Указ. соч., с. 139.

ապարանջանները կարելի է թվագրել, ընդհանուր առմամբ, մ. թ. ա. V—I դդ.։ Հենց այս ժամանակաշրջանն է ընդհանուր մեր համալիրի բոլոր իրերի համար։ Այժմ փորձենք հնարավորության սահմաններում ավելի կոնկրետացնել նախնական այս թվագրությունը։

Եթե պեղումներով հայտնաբերված նյութերը դիտարկենք համախմբության մեջ, որպես մեկ ամբողջություն, ապա հնագիտական առարկաների վերոհիշյալ համալիրը (բրոնզե ներճկված օձաղլուխ ապարանջան, բրոնզե լարից պատրաստված նշված տիպի շքասեղ, երկաթե կոր դանակ, իլիկի գլուխ, ակոսավոր ուլունքներ) իր զուգահեռն է գտնում Բերդ ավանի դամբարանախմբից հայտնաբերված նյութերում, միայն այն տարբերությամբ, որ այնտեղից գտնված իլիկի գլուխը պատրաստված է ոսկրից, իսկ մատնեքավոր խոշոր ուլունքը՝ աբլակուց։ Բերդի նյութերը Ս. Ա. Եսայանը թվագրում է մ. թ. ա. V—IV դդ.[64],

Ավելացնենք նաև, որ ի տարբերություն Ուշանի դամբարանի, Բերդի դամբարանները հիմնահողային են, ուղղված՝ հյուսիս—հարավ առանցքով և նրանցում կատարված են կոլեկտիվ դիաթաղումներ։

Նկարագրված նյութերը, որպես ամբողջական համալիր, համարժեք են նաև Բեշտաշենի (Ծալկայի շրջան) դամբարանադաշտի մ. թ. ա. VI—V դդ. թվագրվող քարարկղների նյութերին[65]։

Քեթիի Քարոտ հողեր դամբարանադաշտի № 45 դամբարանը թվագրվում է մ. թ. ա. VII—VI դդ.[66]։ Այնտեղ կատարված է կոլեկտիվ դիաթաղում (գտնված է հինգ կմախք), կառուցվածքով այն տարբերվում է հետազոտվող դամբարանից։ Կենտրոնական թաղմանն ուղեկցող առարկաների տեսակներն (պուլիկ, երկաթե կոր դանակ, բրոնզե մախաթ և ապարանջաններ, մածուկե ուլունքներ), ինչպես և նրանց տեղադրությունը խցում (ննջեցյալի նկատմամբ ունեցած դիրքը), մասամբ հիշեցնում է Ուշանի դամբանախցի իրադրությունը և այնտեղից գտնված թաղման գույքը։ Ինչպես ասվեց, հնագիտական նման համալիրները, սովորաբար, ուղեկցում են կանանց թաղումներին։ Ուստի դժվար թե Քեթիի № 45 դամբարանի կենտրոնական թաղումը լինի առաջնորդի թաղում[67]։

Մեծամորի № 4 դամբարանը, որն արդեն առիթ եղավ հիշատակելու, իր թաղման գույքի միջոցով կարելի է թվագրել մ. թ. ա. VIII—VII դդ.։ Հիմնական թաղմանն ուղեկցող նյութերից դատելով այնտեղ կնոջ դիակ է ամփոփված։ Խցի չափերով և ուղղությամբ այն համանման է Ուշանի դամբարանին։ Մեծամորի դամբարանից հայտնաբերված «թռչնագլուխ կեռիկներով», գլխիկից ցած լայնակի ակոսներով զարդարված շքասեղը (ինչպես նաև մյուս շքասեղ-հերակալները), ապակե ուլունքները, մածուկից պատրաստված տակառաձև և սաթից պատրաստված ակոսավոր ուլունքները, դանակ հիշեցնող բրոնզե իրը, ինչպես նաև օձ հիշեցնող օղակաձև ոլորված գլխիկով արծաթե հերազարդերը թաղման ճոխ գույքի մի մասը կազմելով միայն և ունե-

---

64 С. Есаян. Указ. соч., с. 291.

65 В. А. Куфтин. Указ. соч., с. 41—42.

66 Л. А. Петросян. Раскопки памятников Кетн и Воскеаска (III—I тыс. до н. э.). Ереван, 1989, с. 78, табл. 63, 4.

67 Նույն տեղում։

նալով հնագիտական առարկաների նյութի ու ձևի որոշակի տարբերություններ, իրենց համախմբության մեջ հիշեցնում են Ուշանի դամբարանի թաղման գույքը, կարծես թե նման հնագիտական համալիրների նախատիպը հանդիսանալով։

Այսպիսով, Ուշանի դամբարանի նյութերում բրոնզե ներճկված օձագլուխ ապարանջանների առկայությունը հնարավորություն է տալիս զգալիորեն կոնկրետացնել վերոհիշյալ դամբարանի թվագրման ժամանակը, այն ամփոփելով մ. թ. ա. I հազարամյակի II կեսի սահմաններում։ Խնդրո առարկա հնագիտական համալիրի նախատիպը, որոշ վերապահումներով, կարելի է տեսնել կանանց թաղումներն ուղեկցող մ. թ. ա. VIII—VI դդ. համալիրներում։

Մեկ դամբարանի պեղումների հիման վրա անիմաստ է խոսել թաղման ծեսի մասին։ Կարելի էր սահմանափակվել միայն թաղման ծեսի վերականգնվող մասի նկարագրությամբ (ինչը և արվեց վերը) կամ ընդհանուր կարգի դատողություններով. այսպես, օրինակ, դամբանաթմբից և դամբանախցի սալերի վրայից գտնված խեցանոթների բեկորները վկայում են հոգեհացի արարողության մասին, վանակատի բեկորները սփռվում էին չար ոգիները վանելու նպատակով և այլն։ Սակայն Ուշանի դամբարանի թաղմանն ուղեկցող նյութի առանձնահատկությունը (խոսքը դամբանախցում տեղադրված իլիկների մասին է) կարող է կապված լինել մեր նախնիների աշխարհայացքային մի պատկերացման հետ, որին, իմ կարծիքով արժե անդրադառնալ ավելի հանգամանորեն։

Ինչպես հայտնի է, մեզանում, երբ մարդ է մահանում, ասում են. «Կյանքի թելը կտրվեց»։ «Մանել», «հյուսել» և «ճակատագիր», «բախտ» հասկացությունների կապը գալիս է շատ հնուց[68]։ Հին խեթական ծեսերում հաճախ հիշատակվում են «բուրդ»-ը և «իլիկ»-ը, որոնք կապվում են «Ստորին աշխարհի» և նրա բնակիչ «օձի» հետ (մեկ անգամ ևս հիշենք իլիկների և օձագլուխ ապարանջանի համադրությունը միևնույն դամբարանում)։ Ստորերկրյա աստվածուհիներն իրենց ձեռքերում պահում են իլիկներ, որոնք խորհրդանշում են կյանքի տևողությունը[69]։ «Ստորին աշխարհի» նմանատիպ կանացի աստվածություններ են ներկայացնում իրենցից նաև հին հունական մոյրաները՝ մարդկային ճակատագրի աստվածուհիները[70]։

---

68 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Указ. соч., с. 583.

69 В. Г. Ардзинба. Указ. соч., с. 88.

70 Մ. Ն. Բոտվիննիկ, Մ. Ա. Կոգան, Մ. Բ. Ռաբինովիչ, Բ. Պ. Սելեցկի. Դիցաբանական բառարան (թարգմ.՝ Ս. Մ. Կրկյաշարյանը). Երևան, 1985, էջ 161։ Ն. Ա. Կուն. Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները (թարգմ. Լ. Հախվերդյան). Երևան, 1956, էջ 28—29։

УДЖАНСКИЙ КУРГАН

Г. С. ТУМАНЯН

Резюме

В 1989 г. в Аштаракском районе Уджанским отрядом отдела новостроечной археологии Института археологии и этнографии АН Республики Армения был раскопан курган, находившийся на небольшом холме южной окраины села Уджан. Курган диаметром 5,4 м имел 0.4 м высоты и был частично разрушен во время геодезических работ. Он был окружен кромлехом, сооруженным из небольших базальтовых глыб. Обнаруженный при раскопках насыпи кургана археологический материал состоит из нескольких осколков и отщепов обсидиана и черепков сосудов. Погребальная камера находилась в центре кургана на небольшой глубине внутри малого кромлеха диаметром 2,1 м. В плане овальная, размерами 1,20×0,65×0,35 м, она была сооружена из небольших каменных плит и направлена на северо-занад. Усопшая была погребена обрядом трупоположения, на правом боку, в скорченном положении. Череп находился у северо-западной стены, лицом на юг. Сопутствовавший материал, найденный в погребальной камере, состоит из горшочка, железного серповидного ножа, трех пряслиц, бронзовой булавки, двух бронзовых браслетов с прогибом и бус, изготовленных из разных материалов (серпентин, стекло, паста, фаянс). В камере находился также скудный остеологический материал Найденный археологический материал датируется V—IV веками до н. э., но не исключается и более поздняя датировка (III—II вв. до н. э.). Предприняты меры по дальнейшей охране нововыявленного памятника.